

չորս աղեղները կը միանան՝ կատարեալ սէրն է որ իրարու հետ կը զօղէ յաղթական և զինուորեալ Եկեղեցին։ Ըստ Առաքելոյն՝ Հաւատքն և Յոյսն անկանին և խափանին երեւելի աշխարհիս հետ, չափուած են մարդկային կեանքով, «Սէր ՈՁ ԵՐԲԵՔ ԱՆԿԱՆԻ»։ Ըրումն օրինաց Սէրն է, որով վերինը և ներքինը կը զօղին իրարու հետ՝ կամարակապով, որուն վրայ վերեւ կը հանգչի Գոթէթը՝ ուր Քրիստոս թագաւոր ամենակալն, անսահմանն և յաւիտենականը կ'իշխէ աստուածութեամբն ու միահեծան իշխանութեամբը. իսկ ըստորեւ Եկեղեցին հաւաքուած, Քրիստոսի սուրբ և անարատ հարսը, բազկատարած պաղատագին կ'երգէ առ փեսայն երկնաւոր, երբ երեւի փառք Հօր և հրեշտակաց սրբոց. «Յորժամ Եկեղեցի հարսնացեալ միանայ ընդ փեսայիդ, ընդ իմաստուն սուրբ կուսանացն, արժանացո՞ւ առագաստին զմեզ ընդ նոսին երգել զփառս ի բարձունս»։

Ըստ մեր համոզման՝ մարդկային ուսմանէ և ճարտարագործութենէ աւելի՝ հաւատքը մեծ դեր խաղացեր է քրիստոնէական ճարտարապետութեան մէջ։ Հայը առկուցն՝ Լուսաւորչի քարոզած Նիկիական հաւատքով, զիմացեր է ապականիչ գայլերու նախճիրներուն, արիւնով լուացեր է իր հողը, որուն վրայ կանգներ է իր եկեղեցիները։ Նա տեսաւ և զգաց որ լքուած է հզօրներէն, «աստուածաման կայսրնեւրէն, սխալական մարդիկներէն յուսակոթոյս» աչքերն յառեր է երկինք ու աղօթեր. «Համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն»։

Նայեր է նա, և պէտք է միշտ նայի, իր բարձր, ճերմակ և անվախ սարերուն, որոնց մէջ ծերագոյնը՝ ամպածրար Արարատը՝ փաղփուռ և պաղպաջուն զլիւծը, ակնապարար կապոյտ երկնքի տակ. եւ հոն տեսեր է երեւոյթն ու նմանութիւնը կամարին որ կը նկարուի ցօղացող անձրեւի ժամանակ, այսինքն, Աստուծոյ ողորմութեան ծիածանը կարակնակերտ,

եռագոյն՝ Մասեաց գագաթէն և Այրարատեան դաշտին վրայ ձգուած՝ վաղարշապատի կաթողիկէին վրայէն. յիշեցնելով մարտիրոս ժողովուրդին՝ Աստուծոյ կնքած հաշտութեան և խաղաղութեան դաշինքը Նոյի հետ։

Աստուած իր անփոփոխ և յաւիտենական գաղափարով լաւագոյն երկիր մը չէր կրնար ընտրել. վասն զի հոն իջաւ եւ ոտնաձայն հանելով Ադամին իմացուց իր գալը։ Նոյի աւանդութիւնը երկար մնաց իր սերունդներուն մէջ, որոնք Հայաստանի հողին վրայ ապրեցան։ Անոնք իրենց յատուկ բարբառով սրբազան սարը կոչեցին Մասիք, այսինքն ազատ, զատուած յամենայնէ, անթեւ, անշղթայ, տափարակ դաշտի երեսէն միայնակ, անվերջով, հաստատուն և վիթխարի հասակով կանգնած, հազար ու հազար դարեր տեսաւ հեղեղներու նման ազգերու գալն ու ելն թալը. միայն վերջին հայ ցեղը մնաց հոն իբր առաջնորդ, որ իր անունը դրոշմեց անոր բերեղեայ հողերուն վրայ, առաւ անոր հողին, ապրեցաւ անոր շունչով, հայրենիքի պաշտպաններն հիմա կը հանգչին անոր հովանիին տակ։

Հայ ճարտարապետը Մասիսէն ներշնչուած, անոր նման կառուցեր է իր կաթողիկէները վսեմ, երկնասլացիկ, ըստուար, հաստատուն, ազամանդեայ կուրծքը տալով բարբարոսաց հարուածներուն, և տարերքներու բռնութեան դէմ, աւելաւորակներէն շատերը վիրաւոր և անդամահատ՝ կանգուն են դեռ, իբրեւ բողոքահաւոր մարդոց անիրաւութեան դէմ, և անոնց ցաւագին սրտէն բխած արձագանքը մեծ դաշնակիցներէն արդարութեան և իրաւունքի պահանջ մ'է։

Գիր և զրականութիւն փրկեց Հայ ազգը կորուստէ, գիր և տպագրութիւն պիտի փրկէ Հայաստանի հին աւերակները։ Աւիշան կարող եղաւ այսպէս ողջունելու Նոր Անիի կանգնումն և յուսալ որ բարբարոսներն անկարող պիտի ըլլան անոր վրայ դնել իրենց համայնաջինջ թաթիւը։

Այլ օրանաւսն յեղեղուկ
Համայնաջինջ ոսոխ բախդ՝
ժամանեալ գայ. վա՛ն եղուկ։ —
Ոչ, ոչ. նա չէ աստ անյաղթ
ԿԱԹՈՂԻԿԷՔՍ երկնապար,

Կոթողը ու արձանը խաչակնիք,
Եւ ՄԱՐԵՄԱՅՍ ՎԵՉ ՏԱՃԱՐ
Յաւերժութեան ունին նիգ.
Մի՛ բնաւ տեսցէ նա զԱՆԻ՝
Հետակորոյս ի գետնի։

Հ. Գ. ՆԱՀԱՊԵՏԻԱՆ

(Շարունակելի)



Խ Ո Ւ Ր Ր Ի - Մ Ի Տ Ա Ն Ն Ի

ԵՒ

Խ Ա Թ Թ Ի Ա Կ Ա Ն Լ Ե Զ Ո Ւ Ն Ե Ր Ը



«Բազմավէպ»-ի¹ մէջ ընդգծած խոր-
բիական հայեցողութեան և յարակից ցե-
ղախօսութեան և լեզուաբանութեան մասին
Պատ. Հ. Յ. Տաշեանի² գրած հետաքրքրա-
կան քննադատութիւնը կը յարուցանէ մի-
շարք նոր հարցեր։ Ուրախաւ թէ տեսնել
որ գիտական հօր և իմ միջեւ փոխանա-
կուած բանասիրական այս հետախուզու-
թիւնը արթնացուցած է զգալի շահագր-
գողութիւն նաեւ մեր բանիմաց ազգայինների
միջեւ, ինչպէս կ'ապացուցանեն ընթեր-
ցողներէ ստացած մի քանի նամակներս։
Քննութեան առարկայ հարցը և անոր հե-
տազօտութեան մերոտնկը ունին կրթական
նշանակութիւն մի քանի տեսակէտներէ և
ուրեմն արժանի են բազմակողմանի ու-
սումնասիրութեան։ Հ. Տաշեան կը նա-
խընտրէ տառականօրէն հետեւիլ որոշ գիտ-
նականների առաջադրած ենթադրութիւն-
ներին, և յաճախ անոնց փխրուն փաստերի
վրայ հիմնուած եզրակացութեան։ Որպէս
զուտ գիտական մերտ, ի հարկէ իրաւունք
ունի քննադատ հայրը. իսկ ես հետեւելով
հանդերձ այդ գիտական մերտին, կը
փորձեմ կիրարկել այդ եզրակացութիւն-

ները խնդրոյ առարկայ աշխարհամասի
տեղագրական ու պատմական հնարաւո-
րութիւններին, Թորրէրի³ հետ համոզուած
լինելով որ պատմական և ընկերային որոշ
ազդակներ դարերի ընթացքին յառաջ բե-
րած են համեմատաբար քիչ փոփոխութիւն
մեր բնավայրի և դրացի երկրների մէջ։

Հետագայ տողերի մէջ յառաջ բերած
իրողութիւնները պիտի ապացուցանեն որ
հայ ուսանողներս հետեւելով հանդերձ
ամէն կարգի բեւեռագրեր առեղծոգների
ընթերցումներին, պարտինք որոնել պատ-
մական լուսաբանութիւններ մեր դրացի
ազգերի զասական հեղինակութիւններէն,
ինչպէս նաեւ մեր մայրական կաթին հետ

1. «Բզմվպ.» 1931, Թ. 9-10, էջ 426-433. «Խոր-
բիներ քի Armenoidներ».

2. Տաշեան Հ. Յ. «Հանդ. Ամս.» 1931, Թ. 10-11,
էջ 618-631. «Հարեր եւ Ոչարարտեանք», դարձեալ
Տաշեան Հ. Յ. «Հանդ. Ամս.» 1932, Թ. 3-4, էջ 162-
179. «Հարեր եւ Ոչարարտեանք».

3. Հմտ. G. Forrer: Stratification des langues
et des peuples dans le Proche-Orient préhistori-
que. ի «Journal Asiatique». Tome CCXVII. 1930
Oct.-Déc. Թիւ. էջ 250.

ծծած և դպրոցական գրասենյակներին գոց սովորած տեղանուններին, անձնական ա- նունների և բանասիրական մեծ արժէք ներկայացնող գրոյցների և աւանդակների զուգորդութենէն: Հաւաստի եմ որ Հ. Յ. Տաշեան իր մեղուական աշխատութեանց ընթացքին բնագոյնը կը զգայ բնատուր- միկ ծանօթութեանց առաւելութիւնները այն գիտնականների հանդէպ, որոնք տե- ղանունների դիրքերը որոշելու համար կը ճամբորդեն ինքնաշարժով, և երբ չունեն- նան այդ պատեհութիւնը՝ սովորաբար կը սովորին քարտէսներէ: Նոյնպէս ապահով եմ որ այս համեմատութիւնները ունէ կերպով պիտի չմեկնարանուին որպէս դեր- գնահատութիւն Արեւմտեցի գիտնա- կանների հոյակապ աշխատութեանց, - գիտնականներ՝ որոնցմէ շատեր իրենց կեանքը նուիրած են ստեղծելու բեւեռա- գրական գիտութիւնը և ի լոյս աշխարհ բերած են նաեւ մեր նախապատմութիւնը: Այս կէտը պարզելու համար անմիջապէս յիշեմ օրինակներ: Երբ Հրոզնի Միտանիի մայրաքաղաք Վաշնգտոնի կ'որոնէ Ռաս- էլ - Այն ի կամ Հիւսիսային Միջագետքի մի որ և իցէ գիւղի մէջ, հաւանաբար անոր աչքերին երբեք չէ հանդիպած իրանական Վաշագան անձնական անունը: Եւ արդար էլ չէ սպասել Հրոզնիէն որ նա գիտնայ թէ պատմահայր Խորենացին կամ Փաւս- տոս Բիւզանդ կը յիշեն մի Վաշագան որ- պէս Պարսիկ մի զօրավար (Փ. Բիւզանդ. Գ 40), և կամ մեր սպարապետ Վաչէ Մամիկոնեան կամ Արծրունի տոհմերէն (Հմմտ. Մ. Խորենացի. Գ. 65): Վաշու- գանի տեղանունը լսելու պէս որոնեցի բոլոր պատմական տուեալները այդ ա- նուն մասին: Հաւանաբար Հրոզնի չըն- դունի որ և է կապակցութիւն Միտանիի մայրաքաղաքի անունն ու Պարսիկ Վա- շագան անունն միջեւ: Դարձեալ խաթի Մեծ արքայ Հուրբիլուլուի մաս կը յիշէ Միտանացի թագաւորի հետ կնքած դաշ- նագրի մէջ: Այդ անմիջապէս ինձ յիշեցուց Ասորեստանի Սաղմանասար Գ ի և Սարգոն

Բ ի յիշած նոյնանուն քաղաքը Tēpurzīa, Բաղդադեցի Հուրբիլուլուի մասին (1390- 1350 Գ. Ա.) և Սաղմանասար Գ ի (859- 824 Գ. Ա.) տուած տեղագրական կա- պակցութիւնները Tēpurzīa տեղանունի մասին: Գտայ որ երկուքն ալ մօտաու- րապէս կ'աւանդեն միեւնոյն շրջանին, այսինքն Ռուանտիզէն դէպ ի հիւսիս եր- կարող ներկայ. Դիրուր-Դէպուար գետա- հովտին: Անձամբ ծանօթ եմ այդ շրջան- ներին: Գաղափարների զուգորդութեամբ Tēpurzīa անունն ընթերցումը բոլորէ- պէս իմ մտքիս մէջ կը վերականգնէ տեղագրական պատկերը: Ի հարկէ այս նոյնացումները հիմնուած զուտ ճայնային նմանութեան վրայ կարող են լինել սխալ, ինչպէս մեզ կը զգուշացնեն Հ. Յ. Տաշեան, Բրոֆ. Սէպս, Բրոֆ. Լէյման - Հաուրտ և տասնեակ ուրիշներ. սակայն երբ տեղա- գրական մանրամասնութիւններն ալ կը լրացնեն նոյնացման գործը, այլեւս քիչ կասկած կը մնայ խնդրին բանասիրական ճշգրտութեան մասին: Թոյլ տուէ՛ք մի անգամ եւս կրկնել այս եական կետը: Եթէ Հրոզնի - Պորբէր և ուրիշ գիտնականներ չունին այդ մտաւորական հոգեկան նա- խաւարամտութիւնը առ Առաջաւոր Ասիոյ պատմական մթնոլորտը, ինչպէս մենք հայերս ունինք որպէս մեր բնավայրին, այդ ո՛չ մի կերպով չի նուագեցներ անոնց կատարած գործը: Ընդհակառակն մեր ու- սումնասիրութիւնները հնարաւոր կը դառ- նան միմիայն բեւեռագրերի առեղծուած- ներով և անոնց մեզի տուած նախապատ- մական լոյսերով:

Ամիսներէ ի վեր այս խնդիրները մասին կը խօսիմ Բրիտանական թանգարանի ակադեմիկոս Ստրազսենի հետ: Այս տա- րուան ընթացքին լոյս պիտի տեսնէ խա- տիական Հայաստանի տեղագրութիւնը՝ Ըստ Ասորագիտական աղբիւրներին, որի ձե- ուագիրը պատրաստ է արդէն:

Մերոտի և սկզբունքի այս հարցը փա- կելէ առաջ, բանաւոր է այստեղ մէջբերել մեր մտաւորական ազգայնականութեան պաշտելի ուսմիտներին՝ Հ. Ղուկաս ին-

ճիճեանի¹ մի կարծիքը: «... Ի հնախօս օրինակագրաց որք յայլ և այլ դարս կացեալք և գանցելոց ժամանակաց մատենագրեցին, գովելի և անսոգիւտ նորա եւեթ կալեալ են ի կաճառս իմաստնոց, որ անաչառ քննաբա- նութեամբ յաճեալ ընդ համօրէն մա- տեանս հնոց՝ վկայ հաւատարիմ բանից իւրեանց զնոցին պատգամն պատկառելիս առեալ աճեն յանդի- ման ընթերցանելեացն գանձ յաճա- խաբան հմտութեանց պատրաստեալ առաջի քննողական մտաց: Քանզի եղեն արդարեւ բազումք, և ի նոցանէ ոչ սակաւք հարուստք ի հանճարոյ և ի հմտութենէ, որք ճառեցին զհնու- թեանց ազգաց. այլ աւաղ բախտի դիւրասահ մարդկութեանս, զի յո- լովք ի նոցանէ կապեալք ի սէր ինքնահնար վարկածիցն անյագ եր- կայնարանութեամբ մոլորեցան ի վրիպակախօս բանից ի բանս, մինչեւ բազում անգամ հնախնդիր ուսումնա- սիրին միտք փոխանակ առաջնորդ ճշմարտութեան ունելոյ զայնպիսին յանելանելի բաւիղս գտան պարա- նեալ:

Ոմանք ի մեծամեծար օրինակա- գրաց Երրօպիոյ այսմ մոլորաշաւիղ հետոց ի վերայ հասեալ ստուարա- կարկատ մատենիւք յօժարեցին լու- սաբանել զհեռաւոր ժամանակաց հնութիւնս, երաշխաւոր ճշմարտու- թեան բանից իւրեանց ոչ այլ ինչ կալեալ, բայց զնախնի մատենա- գրացն զամբոխս բանից: (Պարզ է որ հեղինակը կ'ակնարկէ Յոյն և Հռոմեական Դասակարգ. Գաւոր. Ա. Ս.): Զի զինչ այլ մարթէր ունել առաջնորդ ի մռայլ մոռացութեան անցելոց դարուց բաց ի բանից արանցն ի դարսն յայնո- սիկ ծաղկելոց, որք տեսողս լեալ իցեն որոց եղեն աւանդապահք, կամ գործողք իսկ հոգակաւոր անցից՝ ընդ ձեռն նոցա ժամանակոց մինչեւ ցհե- ուաւոր զաւակս նոցին:

Բայց և այլ դժուարայաղթ խոչ- ընդակն ելանէ առաջի հնախոյզ ու- սումնասիրին դիցապատիր մոլորու- թիւն աստուածանգէտ մատենագրացն հեթանոսաց, որք վրէպք ի ճշմար- տութենէ հնախօս բանից աստուա- ծապատում ճառիցն՝ մտացածին առասպելեօք զամենայն հնախօսու- թիւնս ազգաց վեր ի վայր արարին. և նահապետաց աստուածախօս մա- տենիցն առասպելական անուանս ինչ կարկատեալ գուն գործեցին մուրա- ցածոյ ճոխութեամբ զհայրենիս իւ- րաքանչիւր բարեքել կամամտածա- կան բանիւք: Եւ ի ճախարակեայ պաճուճազարդ բանից աստի և ի յղկեալ ճարտարախօսութենէն գե- րեալ բազմաց մերոյ ժամանակիս մերձաւոր արանց և ոճոյս մերոյ խոստովանողաց զհետ չոգան նոցին, մինչեւ ինքնահնար մեկնութեամբք խեղաթիւրել և զբանս սրբագիր մա- տենիցն, միոյն ի Յունաստան պան- դրխտեցուցեալ զնահապետսն սրբոց մատենից, միւսոյն յԵգիպտոս նժդեհս զնոսա տարեալ, այլ ոք ի Սպանիա, կամ ի Գերմանիա, և մինչեւ ի Շը- ւետս անգամ յեզերս տարեալ սահ- մանաց երկրի, եւ զնոյ յաշխարհ Սինէացւոց տարագիր աքսորեալ: Իսկ ազգիս մերոյ և մերոց հնութեանցն յիշատակ չիք և ոչ ուրեք. և եթէ յիշեցնեն եւս, ոչ ի պարծանս ինչ մեր, մանաւանդ թէ ճշմարտութեան, այլ սուղ և վեր ի վերոյ բանիւք և լի վրիպակօք. որպէս և զեկզքնա- տրութիւն ազգիս համարուն ասելով ասորւոյն. զնախարարբառ լեզուն մեր զլեզու մարդկութեանս համօրէն, որպէս զեղեցիկ պատճառաբանու- թեամբք հաւանեցուցանէ մատենաւ,

1. Հ. Ղուկաս ինճիճեան. Հնախօսութիւն աշխարհա- գրական Հայաստանեայց աշխարհի: Ի Վենետիկ. ի տպա- րանի սրբոյն Ղազարու: Յամի 1835 ՌՄՁԴ. Հատոր Ա. Յառաջաբան, էջ 5:

ծնունդը նորագիւտ և աղիստորոյզ լեզուաց խառնադանձ մարդկան, այլ լուրջ հանգերձ...»:

Հայ մեծ բանասէր Ինճիճեան այս տողերը գրած է մօտ 100 տարի առաջ: Եթէ այսօր կենդանի լինէր մեծ գիտնականը, ապահովաբար պիտի գրէր աւելի խիստ նորագոյն բանասիրութեան պաղ երեւոյթներէ մասին:

Արդ Հ. Յ. Տաշեանի քննութեան առած մի քանի կէտերի մասին: Բաց ի սահմանաւորման և բառախօսութեան փոքր տարբերութիւններէ, գիտնական հայրը կը թուի համաձայնիլ Խուրրիական իմ հայեցողութեան: «Փոքրասիական կամ «Հայաստիպ» տիպաբը միակ պատմական ազգի մը (— Խուրրիներու —) ընծայել՝ ուղիղ չի կրնար ըլլալ»:

Ակնհեւ է այդ ճշմարտութիւնը: Երբ կը յիշուի թէ Armenoid տիպը կը տաւ ըսած էր թէ «Հրոզնի արդէն հաստատած է որ նախապէս իր «Խաթթիական» կոչած գլխաւոր լեզուն Խարրիական էր»...: Ինչպէս հեղինակն ուղղօրէն դատած է՝ ես չկարողացայ ձեռք բերել «Mitteilungen d. Deutsche Orient Gesellschaft 1915 Des. n. 56p. պատերազմի տարիներին զուգահեռաբար պատճառաւ այդ թիւերը չկրցայ գտնել Անգլիոյ մէջ: Այդ ես քաղած էի անգլ. մի աղբիւրէ զոր այժմ չունիմ ձեռքիս տակ: Սովորաբար ոչ մի մէջբերում չեմ կատարեր առանց աղբիւրը անձնապէս տեսած լինելու: Այս ըսելէ յետոյ ինձ անհասկնալի կը մնայ գիտնական հօր ուժեղ առարկութեանը հայ բառի հ սկզբնատառի իս (— իսայ) լինելու մասին: Խոյ հնչումը ընթացիկ է մինչեւ այսօր ոչ միայն Վանայ, Մշոյ, Աւազկերտի շրջաններէ, ալ անջովս լսած եմ նաեւ

Հ. Տաշեան իրաւացիօրէն ի վեր կը հանէ իմ մէկ սխալը այն տողին մէջ ուր ըսած էր թէ «Հրոզնի արդէն հաստատած է որ նախապէս իր «Խաթթիական» կոչած գլխաւոր լեզուն Խարրիական էր»...: Ինչպէս հեղինակն ուղղօրէն դատած է՝ ես չկարողացայ ձեռք բերել «Mitteilungen d. Deutsche Orient Gesellschaft 1915 Des. n. 56p. պատերազմի տարիներին զուգահեռաբար պատճառաւ այդ թիւերը չկրցայ գտնել Անգլիոյ մէջ: Այդ ես քաղած էի անգլ. մի աղբիւրէ զոր այժմ չունիմ ձեռքիս տակ: Սովորաբար ոչ մի մէջբերում չեմ կատարեր առանց աղբիւրը անձնապէս տեսած լինելու: Այս ըսելէ յետոյ ինձ անհասկնալի կը մնայ գիտնական հօր ուժեղ առարկութեանը հայ բառի հ սկզբնատառի իս (— իսայ) լինելու մասին: Խոյ հնչումը ընթացիկ է մինչեւ այսօր ոչ միայն Վանայ, Մշոյ, Աւազկերտի շրջաններէ, ալ անջովս լսած եմ նաեւ

Ո՛չ մի բանաւոր ուսանող պէտք չէ պնդէ ու է վիճելի կէտի վրայ: Սակայն Հրոզնիի վերոյիշեալ առաջադրութիւնը կը թուի հաստատել իմ առաջին ենթադրութիւնը:

1. Հ. Յ. Տ. «Հանդ. Ամս.» 1932, քիւ. 3-4, էջ 164.
2. «Հանդ. Ամս.» էջ 164. ծանօթ. 263.
3. Հմտ. Waldemar Belch: Die Arsitze der Chaldeer und die Ausbreitung der chaldaischen Macht. Ի «Հանդ. Ամս.» 1927, ք. 10-12, էջ 805-806.
4. «Հանդ. Ամս.» անդ, էջ 174.
5. Badrich Hrozny: Une inscription de Ras-samra en langue Churrite.
6. «Բզմկ.» 1931, ք. 9-10, էջ 431. ծանօթ. 2.

կաղապարուած հին Հռոմէական ուղղագրութեան և զրչութեան եղանակներով, բնականաբար Եւրոպացի բանասէրներին զարմանալի կը թուին նախապատմական Առաջաւոր Ստիոյ լեզուաբանական այս առանձնայատկութիւնները, սակայն մենք հայերս — ժառանգորդներս, եթէ ոչ բուն ստեղծողներ նախապատմական այդ հին քաղաքակրթութեան — բնագագաբար կը

զգանք այդ հնչումների զանազանութիւններն ու երանգները: Գիտնական հօր միւս նկատողութիւնների — վաշտզաննի մայրաքաղաքի, ներկայ կեսաբիա — Raneš, Gul-bi-na-ašի եւն. հարցերի մասին տեղագրական մանրամասնութիւններով արդէն գրած եմ, ինչպէս յիշեցի վերեւ, և հարկ չկայ կանխելու այդ հրատարակութիւնը:

ԱՐՇԱԿ ՍԱՅՐԱՍԵԱՆ

ՆԱՀԱՊԵՏ ՇԱՀԻՐԻ ՄԷԿ ՏԱՂԸ

«Բազմավէպ»ի հին թիւերէն մէկուն մէջ — Մարտ 1859, էջ 70 — «Ազգային բանաստեղծութիւն» վերնագրին տակ կը հանդիպիմ անստորագիր տաղի մը «Ի վկայուհին Ս. ԽԱՆՈՒՄ Նահատակ Ի Թոփրաք Քալէ»: Այդ տաղը սակայն այնքան ներշնչուած, շնորհալի և կրօնաբոյր է որ բուն տեղէ մը կ'արթնայ ընթերցողին մէջ՝ հեղինակը գիտնալու:

Հ. Մինաս Բժշկեան ճիշտ նոյն տաղին լեզուով, շունչով և գրեթէ բառերով նման մ'ունի ամփոփած իր «Երգարան»ին մէջ (գրուած 1800ին, Գրչ. վանացոյ, Թ. 1810, Երգարան Բ.) սոյն վերտառութեամբ. «Երգ ՆԱՀԱՊԵՏ ՇԱՀԻՐԻ ՍԱՅՐԱՍԵԱՆ հաւատոյց մատնելոյ ի մահ»:

Անուն աղջկան՝ վասն ի Քրիստոս հաւատոյց մատնելոյ ի մահ»:

Բնաւ չեմ կասկածիր որ յիշեալ տաղն ալ այս ՆԱՀԱՊԵՏ ՇԱՀԻՐԻ գործն ըլլայ, մանաւանդ որ կարծես մին միւսին շարունակութիւնն է և գիրար կը լրացնեն:

Ահա վերջինս որ կը համարիմ թէ ցարդ անտիպ մնացած է:

Հ. ԵՂԻԱ ՓԷՆՈՒԵԱՆ

Աշխարհքս Թողեր Ստուծոյ սիրովն վառեցար.
Այդչափ չարչարանաց ինչպէս դիմացար.
Քրիստոսի Հարս ըլլալու խոստացար.
Դուն խօսացող ամուր կեցար, սուրբ Խանրմ:

Պօղբ էր սեւեռին նոր հասած նուպար,
Գեղեցիկ պատկերդ, սիրուն եւ հարտար,
Երեք շաբաթ զարկին զքեզ քարէ քար,
Թէ արի մեզ հետ տաճկցիր, սուրբ Խանրմ:

Սուրբ անունդ գնաց երկրոց երկիր,
Նոր հասած նուպար ես աշխարհքս Թէրկիր.
Քարը գետնից աւեր քոյ գլխուդ զարկիր,
Հաւատոյդ կսկծոյն լացիր, սուրբ Խանրմ:

Նահապետ անարժան աս բանքս խօսի,
Անիրաւ դատաստան պիղծ Պիղատոսի,
Թրով կտրտեցին անարատ կուսին,
Թոփրախ խաւայ լուսով լցիր, սուրբ Խանրմ:

